Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մայիսի 27-ի N 657 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 46-րդ հոդվածին, «Զինապարտության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան, սահմանվում են Հայաստանի Հանրապետության զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու, ինչպես նաև այդ գործընթացում զինվորական հաշվառման ամբողջականության ապահովման համար պատասխանատու մարմինների գործունեության հետ կապված հարաբերությունները։

2. Զինվորական հաշվառումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ բնակչության պետական ռեգիստրի վարման քաղաքականության շրջանակներում նախազորակոչային, զորակոչային տարիքի և պահեստազորում գտնվող արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիների հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժահավաքային և զորահավաքային հնարավորությունների գնահատման ու ռեսուրսների վերլուծության պետական համակարգ է։

3. Զինվորական հաշվառման նպատակը խաղաղ և պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության ապահովումն է։

4. Զինվորական հաշվառման խնդիրներն են՝

1) նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների քանակական ու որակական կազմը որոշելը.

2) խաղաղ ժամանակ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության ենթակա քաղաքացիների զորակոչը, ինչպես նաև վարժահավաքային և զորահավաքային նախապատրաստության միջոցառումներին նրանց մասնակցությունն ապահովելը.

3) ռազմական դրություն հայտարարվելու դեպքում զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային համալրումն ապահովելը.

4) զորահավաքային նախապատրաստության շրջանակներում՝ պահեստազորում գտնվող քաղաքացիների՝ զորամասերին կցագրումը, ինչպես նաև նրանց ամրագրումն ապահովելը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկի.

5) զինապարտների հատուկ զինվորական պատրաստության, նրանց ժամկետային և պահեստազորային զինվորական ծառայության փաստաթղթային ձևակերպումն ապահովելը։

5. Զինվորական հաշվառումը վարվում է անընդմեջ, անհատական կարգով և ընդգրկում է զինվորական հաշվառման ենթակա բոլոր անձանց։

6. Զինվորական հաշվառում իրականացնում են՝

1) զինապարտի մշտական բնակության հաշվառման (հաշվառում չունեցողներինը՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատը (այսուհետ՝ տարածքային զինկոմիսարիատ).

2) Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատը (այսուհետ՝ հանրապետական զինկոմիսարիատ)՝ Հայաստանի Հանրապետության մշտական հաշվառում չունեցող և օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված զինապարտներինը։

7. Տարածքային զինկոմիսարիատում զինվորական հաշվառումն իրականացվում է կցագրման ենթակա անձանց ամփոփացուցակի, այբբենական հաշվառման գրքերի և անձնական գործերի, իսկ հանրապետական զինկոմիսարիատում՝ կցագրման ենթակա անձանց ամփոփացուցակի միջոցով։

8. Զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառման կազմակերպման աշխատանքներն իրականացնելու նպատակով համապատասխան մարզպետի որոշմամբ տարածքային զինկոմիսարիատներում ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը ստեղծվում է զինապարտների կցագրման հանձնաժողով՝ համապատասխան զինվորական կոմիսարի ղեկավարությամբ և կցագրվողների առողջական վիճակը հետազոտելու և գնահատելու համար անհրաժեշտ մասնագիտացում ունեցող բժիշկ-փորձագետների մասնակցությամբ։

9. Զինվորական հաշվառման ենթակա զինապարտ քաղաքացիների որակական և քանակական կազմը ճշտելու նպատակով՝

1) տարածքային զինկոմիսարիատները համապատասխան պետական մարմիններից և կազմակերպություններից պահանջում են կցագրվողներին վերաբերող հետևյալ տվյալները՝

ա. հոգեբուժական, հակատուբերկուլյոզային, մաշկային, նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառված լինելու մասին,

բ. բժշկասոցիալական փորձաքննության մարմիններից՝ հաշմանդամություն ունենալու մասին,

գ. տարածքային պոլիկլինիկաներից՝ կրած հիվանդությունների մասին,

դ. ոստիկանության մարմիններից՝ հատուկ հաշվառման, հետաքննության մեջ գտնվելու կամ դատվածություն ունենալու մասին տեղեկանք,

ե. հատուկ դպրոցներից՝ սովորողների բժշկահոգեբանամանկավարժական բնութագիր,

զ. աշխատանքի կամ ուսման վայրից՝ բնութագիր.

2) հանրապետական զինկոմիսարիատը, ըստ անհրաժեշտության, կարող է համապատասխան իրավասու պետական մարմնից պահանջել զինապարտ քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետությունից մեկնած լինելու մասին տեղեկատվություն։

10. Զինվորական հաշվառման վերցված լինելուն վերաբերող փաստաթղթերն են՝

1) նախազորակոչային տարիքի, ինչպես նաև զորակոչային տարիքի և պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած քաղաքացիների համար՝ զինապարտի կցագրման վկայականը.

2) պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցնող, ինչպես նաև պահեստազորում հաշվառված քաղաքացիների համար՝ զինվորական գրքույկը։ Զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը կարող է հաստատվել նաև համապատասխան տարածքային զինկոմիսարիատի կամ հանրապետական զինկոմիսարիատի կողմից ըստ անհրաժեշտության տրված տեղեկանքով։

11. Սույն կարգի համաձայն զինվորական հաշվառման վարման մասին հրահանգը, ինչպես նաև կցագրման ենթակա անձանց ամփոփացուցակի, այբբենական հաշվառման գրքերի և անձնական գործերի, զինապարտի կցագրման վկայականի և զինվորական գրքույկի ձևերն ու դրանք լրացնելու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով։

12. Զինվորական հաշվառման վերցված և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգերում ծառայության անցած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատություն ընդունված զինապարտների

մասին տվյալները համապատասխանաբար փոխանցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն՝ զինվորական հաշվառումն իրականացնելու համար։

13. Զինապարտները զինվորական հաշվառումից հանվում են «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքերում։

14. Զինապարտների զինվորական հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները, անկախ կազմակերպական-իրավական ձևից, գործատու կազմակերպությունները և ուսումնական հաստատությունները վարում են աշխատող կամ սովորող, տեղական ինքնակառավարման մարմինները՝ նաև համայնքում բնակվող (համայնքում հաշվառված կամ չհաշվառված, սակայն փաստացի բնակվող (1 ամսվանից ավելի) (այսուհետ՝ համայնքում բնակվող) զինապարտների վերաբերյալ գրանցամատյան (համաձայն N 1 ձևի), ըստ տարեթվերի և այբբենական հերթականության, որում գրառվում են զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն (եթե հաշվառված չէ, սակայն բնակվում է համայնքում՝ փաստացի բնակության վայրը), օրը, ամիսը և տարեթիվը, կրթությունը, ուսման և աշխատանքի վայրերը, պաշտոնը, տարածքային զինկոմիսարիատում կցագրման օրը, ամիսն ու տարեթիվը, տարածքային զինկոմիսարիատում՝ պահեստազորում հաշվառվելու օրը, ամիսը և տարեթիվը, բնակության վայրի հաշվառումից հանվելու օրը, ամիսն ու տարեթիվը, զինված ուժերում և այլ զորքերում ծառայությունն ու ժամկետը կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքը և ժամկետը ամրագրված լինելը։ Գրանցամատյանը վարվում է առանձին գրքով, որը գործավարության համար սահմանված կարգով կարվում

և կնքվում է, իսկ էջերը համարակալվում են։ Գրանցամատյանը կարող է վարվել նաև էլեկտրոնային տարբերակով։

15. Տեղական ինքնակառավարման մարմինները համապատասխան համայնքում բնակվող, իսկ ուսումնական հաստատությունները սովորող զինապարտ քաղաքացիների մասին տվյալները զինապարտների գրանցամատյանում գրառում են քաղաքացու 14 տարին լրանալու տարում։ Աշխատանքի կամ ուսման ընդունված զինապարտ քաղաքացիների մասին տվյալները զինապարտների գրանցամատյանում գրառվում են աշխատանքի կամ ուսման ընդունվելու մասին հրամանը տալու օրվանից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում։

16. Տեղական ինքնակառավարման մարմիններում և ուսումնական հաստատություններում զինապարտների գրանցամատյանի գրառումների հիման վրա մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը կազմվում են հաջորդ տարվա ընթացքում 16 տարին լրացող նախազորակոչիկների ցուցակներ (համաձայն N 2 ձևի), որոնք ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում ուղարկվում են իրենց գտնվելու վայրի տարածքային զինկոմիսարիատ։ Նախազորակոչիկների ցուցակում գրառվում են զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, օրը, ամիսը և տարեթիվը, եթե հաշվառված չէ, սակայն բնակվում է համայնքում՝ փաստացի բնակության վայրի հասցեն, ուսման վայրը։ Նախազորակոչիկների ցուցակը հաստատվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի կամ ուսումնական հաստատության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով։ Նախազորակոչիկների ցուցակում լրացվում են սույն կետում նշված տվյալները՝ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի կամ ուսումնական հաստատության կողմից, իսկ տարածքային զինկոմիսարիատում լրացվում են զինկոմիսարիատի՝ կցագրման ենթակա անձանց ամփոփացուցակի հերթական համարն ու զինապարտի մասին լրացուցիչ տվյալները։ Զինապարտների գրանցամատյանի գրառումների փոփոխությունների վերաբերյալ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ, իսկ բնակության վայրի հաշվառման կամ հաշվա-

ռումից հանվելու, աշխատանքից կամ ուսումնական հաստատությունից ազատվելու մասին տեղեկատվությունը՝ ոչ ուշ, քան դրանց կատարման օրվանից 7-օրյա ժամկետում ներկայացվում է համապատասխան տարածքային զինկոմիսարիատ։ Տարածքային զինկոմիսարիատները տարեկան մեկ անգամ՝ տվյալ տարվա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում համեմատում են զինապարտների գրանցամատյանի գրառումների, ինչպես նաև նախազորակոչիկների ցուցակների համապատասխանությունը տարածքային զինկոմիսարիատներում զինապարտների մասին առկա տվյալների հետ, իսկ տարածքային զինկոմիսարիատներում զինապարտների մասին առկա տվյալների փոփոխությունների դեպքում յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ դրա մասին տեղեկատվություն են տրամադրում տեղական ինքնակառավարման մարմիններին։

17. Պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից, գործատու կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում զինապարտների գրանցամատյանի գրառումների հիման վրա կազմվում են աշխատող պահեստազորայինների, ինչպես նաև զորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայություն չանցած՝ աշխատող անձանց ցուցակներ (համաձայն N 2.1 ձևի), որոնք ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 1-ը ներկայացվում են համապատասխան քաղաքացու զինվորական հաշվառումը վարող տարածքային զինկոմիսարիատ։ Աշխատող պահեստազորայինների, ինչպես նաև զորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայություն չանցած՝ աշխատող անձանց ցուցակում գրառվում են զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, կրթությունը, աշխատանքի վայրը և պաշտոնը, տարածքային զինկոմիսարիատում՝ պահեստազորում հաշվառվելու օրը, ամիսն ու տարեթիվը, զինված ուժերում և այլ զորքերում ծառայությունն ու ժամկետը, զորակոչային տարիքի անձի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքը և ժամկետն ամրագրված լինելը։ Աշխատող

պահեստազորայինների, ինչպես նաև զորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայություն չանցած՝ աշխատող անձանց ցուցակը հաստատվում է համապատասխան մարմնի (կազմակերպություն, հաստատություն) ղեկավարի ստորագրությամբ և կնիքով։

18. Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից, գործատու կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են ժամանակին ձևակերպել պահեստազորայինների ամրագրումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկի համաձայն, համապատասխան տարածքային զինկոմիսարիատի պահանջով՝ զինապարտներին ծանուցել զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին, զինապարտներին ազատել աշխատանքից կամ արձակել ուսումից՝ զինվորական ծառայության կամ տարածքային զինկոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով։

19. Սույն կարգով սահմանված գործընթացը պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից, գործատու կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում իրականացվում է համապատասխան մարմնի ղեկավարի հրամանով։ Տեղական ինքնակառավարման մարմիններում սույն կարգի պահանջները կատարում է համայնքի ղեկավարը՝ ապահովելով հաշվառման գործընթացի կազմակերպումը։

20. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում աջակցում են տարածքային զինկոմիսարիատներին և հանրապետական զինկոմիսարիատին՝ զինապարտների զինվորական հաշվառման գործում, ըստ բնակության վայրի ռեգիստրի տվյալների, յուրաքանչյուր տարում 15 տարին լրացող արական սեռի քաղաքացիների մասին տվյալները՝ ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան ամիսը,

ամսաթիվն ու տարեթիվը, հաշվառման հասցեն, ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը ներկայացնում են համապատասխան տարածքային զինկոմիսարիատներ։

21. Զինապարտ քաղաքացու՝ օտարերկրյա պետություն մշտական բնակության մեկնելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայրի հաշվառումից հանվելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավասու ստորաբաժանումներից ստացված համապատասխան փաստաթղթում տարածքային զինկոմիսարիատի կողմից կատարվում է նշում տեղեկատվության ստացման մասին, որը հաստատվում է համապատասխան զինվորական կոմիսարի ստորագրությամբ և կնքվում զինկոմիսարիատի կնիքով։ Նշված դեպքում զինապարտը պարտավորագիր է ստորագրում օտարերկրյա պետություն ժամանելուց հետո 7-օրյա ժամկետում տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնում հաշվառման կանգնելու վերաբերյալ։ Նշված քաղաքացու մասին տվյալները համապատասխան տարածքային զինկոմիսարիատի կողմից եռօրյա ժամկետում ներկայացվում են հանրապետական զինկոմիսարիատ, որը դրանք ստանալուց հետո ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում զինապարտ քաղաքացու տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, նախկին բնակության վայրի հասցեն, զինապարտությանն առնչությունը) ուղարկում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ նշելով մշտական բնակության մեկնելու պետությունը, մարզը (նահանգը), քաղաքը (գյուղը), ինչպես նաև, համաձայն սույն կարգի պահանջների, կազմակերպում է նշված քաղաքացիների զինվորական հաշվառումը։ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը զինապարտի մասին սույն կետի համաձայն ստացված տվյալները 10-օրյա ժամկետում հայտնում (ուղարկում) է համապատասխան օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնին, որը դրանք ստանալուց հետո մեկամսյա

ժամկետում քաղաքացու՝ հաշվառման չներկայանալու դեպքում դրա մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով տեղեկացնում է հանրապետական զինկոմիսարիատին։

22. Համաձայն սույն կարգի 21-րդ կետի պահանջների՝ հանրապետական զինկոմիսարիատն իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող և օտարերկրյա պետությունում բնակվող՝ զինապարտության տարիքի անձանց զինվորական հաշվառումը՝ մինչև օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնում այդ անձանց հաշվառման վերցնելը։

23. Օտարերկրյա պետությունում բնակվող և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած, ինչպես նաև օտարերկրյա պետություն մշտական բնակության մեկնելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության մշտական բնակության հաշվառումից հանված և հաշվառման համար տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմին ներկայացած զինապարտի հաշվառումն իրականացվում է ըստ տարեթվերի և այբբենական հերթականությամբ։ Նախազորակոչային տարիքի, զորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների հաշվառումը վարվում է առանձին մատյանով (համաձայն N 3 ձևի), որում նշվում են քաղաքացու ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, տվյալ պետությունում բնակության վայրը, հեռախոսահամարը, եթե նախկինում բնակվել է Հայաստանի Հանրապետությունում՝ նախկին բնակավայրի հասցեն, անցել է պարտադիր զինվորական ծառայություն, թե՝ ոչ, օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման հիմք ունենալը, եթե օգտվում է տարկետման իրավունքից՝ տարկետման հիմքը և ժամկետը, ունի հաշմանդամություն, թե՝ ոչ, ընտանիքի կազմը։

24. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնում հաշվառված, ինչպես նաև տվյալ օտարերկրյա պետությունից մեկ այլ օտարերկրյա պետություն մշտական բնակության մեկնած զինապարտ քաղաքացու մասին տվյալները, դիվանագիտական կամ հյուպատոսական մարմինը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով 15-օրյա ժամկետում ուղարկում է հանրապետական զինկոմիսարիատ և այն պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմին, որտեղ մշտական բնակության է մեկնում զինապարտ քաղաքացին։ Զինապարտ քաղաքացու նոր բնակության վայրի դիվանագիտական կամ հյուպատոսական մարմինը տվյալ քաղաքացու հաշվառման մասին տեղեկատվությունը 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկում է հանրապետական զինկոմիսարիատ, ինչպես նաև հայտնում նախկին բնակության վայրի դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնին։

25. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնում հաշվառված և պարտադիր զինվորական ծառայության ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած) քաղաքացիներին հանրապետական զինկոմիսարիատի ծանուցման հիման վրա դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնի կողմից ստորագրությամբ կամ էլեկտրոնային կապի միջոցով հանձնվում է ծանուցագիր հանրապետական զինկոմիսարատ ներկայանալու մասին՝ համապատասխանաբար մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը և հոկտեմբերի 1-ը։ Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմինը զինապարտին ծանուցելու մասին տեղեկատվությունը և ծանուցված քաղաքացիների ցուցակները մինչև տվյալ տարվա ապրիլի 20-ը և հոկտեմբերի 20-ը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկում է հանրապետական զինկոմիսարիատ։

26. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում աջակցում են նախազորակոչիկների և զորակոչիկների՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Ազգանունը	Անունը	Հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Բնակության վայրի հաշվառման հասցեն, օրը, ամիսը, տարեթիվը (եթե հաշվառված չէ, սակայն բնակվում է համայնքում՝ փաստացի բնակության վայրը)	Կրթությունը	Ուսման վայրը	Աշխատանքի վայրը և պաշտոնը	Տարածքային զինկոմիսա-ռիատը և կցագրման օրը, ամիսը, տարեթիվը	Տարածքային զինկոմիսարիատը և պահեստազորում հաշվառվելու օրը, ամիսը, տարեթիվը	Բնակության վայրի հաշվառումից հանվելու օրը, ամիսը, տարեթիվը	Ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում (ժամկետը) կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքը և ժամկետը	Ամրա-գրված լինելը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*

10_0657

Ձև N 2

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԿՑԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ 19___թ. ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ

_____
(համայնքի կամ ուսումնական հաստատության անվանումը)

_____ _____ 20 թ. դրությամբ

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան տարեթիվը, օրը, ամիսը	Բնակության վայրի հաշվառման հասցեն, օրը, ամիսը, տարեթիվը	Եթե հաշվառված չէ, սակայն բնակվում է համայնքում՝ փաստացի բնակության վայրը (հասցեն)	Ուսման վայրը	Տարածքային զինկոմիսարիատում կցագրման ենթակա ամփոփացուցակի հերթական համարը	Ծանոթագրություն (գրառվում են զինապարտի մասին լրացուցիչ տվյալներ)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*

Համայնքի կամ ուսումնական հաստատության ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (ազգանունը, անունը, հայրանունը)

Կ.Տ.

_____ _____ 20 թ.

10_0657

Ձև N 2.1

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԱՇԽԱՏՈՂ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԻ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ

_____
(պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կազմակերպության կամ ուսումնական հաստատության անվանումը)

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Բնակության վայրի հաշվառման հասցեն	Կրթությունը	Աշխատանքի վայրը և պաշտոնը	Տարածքային զինկոմիսարիատում՝ պահեստազորում հաշվառվելու օրը, ամիսը, տարեթիվը	Ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում (ժամկետը)	Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքը և ժամկետը	Ամրագրված լինելը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի,
կազմակերպության կամ ուսումնական հաստատության ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (ազգանունը, անունը, հայրանունը)

Կ.Տ.

_____ _____ 20 թ.

10_0657

Ձև N 3

Մ Ա Տ Յ Ա Ն

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՄ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Ազգանունը	Անունը	Հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Տվյալ պետությունում բնակության վայրը հեռախոսահամարը, էլեկտրոնային (հասցեն)	Հայաստանի Հանրապետությունում նախկին հաշվառման հասցեն	Առնչությունը զինապարտությանը (անցել է պարտադիր զինվորական ծառայություն, թե՝ ոչ)	Պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման հիմք ունենալը	Նշում ձևակերպված տարկետման մասին (տարկետման հիմքը և ժամկետը)	Ունի հաշմանդամություն, թե՝ ոչ	Ընտանիքի կազմը (ծնող, քույր, եղբայր, կին, երեխա)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*

10_0657